

**Հարցաթերթ**

Աշխարհագրություն առարկայի 2020 թ. դպրոցական  
օլիմպիադայի մարզային (քաղաքային) փուլի  
(տևողությունը՝ 150 րոպե)  
(գնահատման քայլը՝ 0,25 միավոր)

10 - րդ դասարան

1. Թվարկե՛ք աշխարհագրական մշակույթի 4 հիմնական բաղադրիչները (առանց մեկնաբանության) ..... 1 միավոր
2. Ի՞նչ տիպի քարտեզագրական պրոյեկցիաներ գիտեք: Գրե՛ք պրոյեկցիան և նշե՛ք, թե աշխարհագրական ո՞ր գոտու օբյեկտներն են պատկերվում դրանցից յուրաքանչյուրով ..... 2 միավոր
3. Գրե՛ք Արմավիրի և Լոռու մարզերի քաղաքային բոլոր բնակավայրերը (բացառությամբ մարզկենտրոնների) ..... 2 միավոր
4. Ինչո՞վ բացատրել տունդրայի զոնայում ճահիճների առատությունը ..... 2 միավոր
5. Ի՞նչ է «առևտրային պատերազմը»: Ո՞ր երկրների միջև է այն տեղի ունենում ..... 2 միավոր
6. Ի՞նչ է միջազգային տնտեսական միասնացումը (ինտեգրացումը): Թվարկե՛ք տնտեսական 3 միջազգային կազմակերպություն, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը ..... 2 միավոր
7. Լրացրե՛ք աղյուսակում տրված բնական զոնաներին բնորոշ հողատիպերը՝ ..... 2 միավոր

	Բնական զոնայի անվանումը	Բնորոշ հողատիպը (երը)
1.	Արկտիկական անապատ	
2.	Տունդրա	
3.	Տայգա	
4.	Լայնատերև անտառ	
5.	Տափաստան	
6.	Անապատ	
7.	Սավանա	
8.	Հասարակածային խոնավ անտառ	

8. Քանի՞ գրամ աղ կարելի է ստանալ Մն ծովի 1 մ<sup>3</sup> ջրից (պատասխանը հիմնավորել հաշվարկով) ..... 1 միավոր
9. Երկրի բնակչության թիվը 15 մլն է, իսկ բնական աճը՝ 12 %: Ներգաղթը կազմել է 30000, իսկ արտագաղթը՝ 10000 մարդ: Որքա՞ն բնակիչ կունենա երկիրը 1 տարի հետո (պատասխանը հիմնավորել հաշվարկով): 2 միավոր

10. ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ: 1,5 միավոր

1. ՀՀ – ն իր հարևան երկրների համեմատ բնակչության մեծ խտություն ունեցող երկիր է:
2. Բնակչության թվով երրորդ քաղաքը Վաղարշապատն է:
3. Եզդիների մեծ մասը բնակվում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղերում:
4. Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսր բնակեցված գոտին է:
5. 1988 – 1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ հեռացան ՀՀ – ից, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը:
6. ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500 – 2500 մ բարձրության գոտում:

11. Հայկական լեռնաշխարհի գետերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ 1,5 միավոր

1. Հորդանում են հիմնականում ամռանը:
2. Ունեն հիմնականում ձնաանձրևային, մասամբ՝ ստորերկրյա սնում:
3. Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, իսկ Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռնազանգվածից:
4. Արևմտյան և Արևելյան Տիգրիսների միախառնումից առաջանում է Շատ-Էլ-Արաբ գետը:
5. Սկիզբ են առնում Առաջավոր Ասիայի խոշոր գետերը:
6. Եփրատը լեռնաշխարհի ամենաերկար գետն է, Տիգրիսը՝ ամենաջրառատը:

12. Ո՞ր դարաշրջանի ժամանակաշրջան է տրիասը: 0,5 միավոր

13. Նշվածներից ո՞րն է նստվածքային ծագման ապար՝ 0,5 միավոր

1. օբսիդիանը
2. կերակրի աղը
3. մարմարը
4. գրանիտը

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան